ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

18.10.2024Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երեւան

2024 թվականի հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Արամայիս Փաշինյանը, Մարիամ Գալստյանը և Լիլիթ Ալեքսանյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի երեք անդամ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Պաշտոնատար անձանց շահերի բախման կարգավորումների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքների ներկայացում,
2. Մեդիա հրապարակումների հիման վրա իրականացված ուսումնասիրությունների արդյունքների ամփոփում,
3. 2024 թվականի դեկտեմբերի 9-ին նախատեսվող մրցույթի մանրամասների քննարկում,
4. Հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանության ներկայացում:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյանը: Մեդիա հրապարակման հիման վրա՝ Կառլեն Մկրտչյանի վերաբերյալ կատարված ուսումնասիրության մանրամասների ներկայացման արդյունքում Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ալեքսանյանը հարց բարձրացրեց Կառլեն Մկրտչյանի նկատմամբ ՎԻՎ վարույթ հարուցելու անհրաժեշտության մասին: Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը նշեց, որ Կառլեն Մկրտչյանի նկատմամբ նախկինում հարուցվել է վարույթ, սակայն Կառլեն Մկրտչյանը բողոքարկել է Հանձնաժողովի՝ ՎԻՎ վարույթ հարուցելու որոշումը, որից հետո սուբյեկտի կողմից

գրանցվել է նոր խախտում: Քննարկումների արդյունքում՝ Վարույթների և իրավական ապահովման վարչության պետի պարտականությունները կատարող Տաթևիկ Ռուբենյանը առաջարկեց վերլուծություն կատարել և դիրքորոշում ներկայացնել Հանձնաժողովի անդամներին՝ նմանատիպ իրավիճակներում հետայսու Հանձնաժողովի կողմից միատեսակ մոտեցում կիրառելու համար: Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ: Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը առաջարկեց հաշվի առնելով Կառլեն Մկրտչյանի վերաբերյալ մեդիա հրապարակումների քանակը՝ իրականացնել վերջինիս հայտարարագրերի համալիր վերլուծություն, ինչպես նաև Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ալեքսանյանը առաջարկեց՝ շահերի բախման կրկնվող դեպքերի վերաբերյալ համապատասխան պաշտոնատար անձանց առնչությամբ իրականացված ուսումնասիրությունների հիման վրա տեղեկանք կազմել և ուղարկել Կառավարություն:

Տիգրանուհի Խալաֆյանը անդրադարձավ Հանձնաժողովի՝ 2024 թվականի օգոստոսի 7-ին կայացած նիստի ընթացքում Տավրոս Սափեյանի և Գուրգեն Թադևոսյանի նկատմամբ կայացրած որոշմանը՝ նշելով, որ մեդիա հրապարակման ձայնագրությունը մամուլը պետք է տրամադրեր Հանձնաժողովին, սակայն տեխնիկական պատճառներով ձայնագրությունը չի պահպանվել: Հանձնաժողովը քննարկման արդյունքում որոշեց՝ հաշվի առնելով ձայնագրության բացակայությունը, Տավրոս Սափեյանի նկատմամբ չհարուցել ՎԻՎ վարույթ՝ բավարար հիմքի բացակայության պատճառով:

Մեդիա հրապարակման հիման վրա՝ Էդգար Արշակյանի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները ներկայացրեց Տիգրանուհի Խալաֆյանը: Մանրամասների ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշեց՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Մեդիա հրապարկման հիման վրա՝ Դավիթ Ղումաշյանի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները ներկայացրեց Տիգրանուհի Խալաֆյանը: Մանրամասների ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշեց՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում Տիգրանուհի Խալաֆյանը անդրադարձավ նախորդ նիստով կայացված որոշումներին, մասնավորապես Ֆինանսների նախարարության կողմից անցկացված միջոցառման վերաբերյալ հրապարակման ուսումասիրությանը, որի շրջանակներում հարցում էր իրականացվել

«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջոցառումը կազմակերպվել է վերջինիս կողմից: Ստացված հարցման պատասխանը՝ Վահե Հովհաննիսյանի նկատմամբ շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտման դեպքով վարույթ հարուցելու համար բավարար հիմք չի հանդիսանում: Արդյունքում Արամայիս Փաշինյանն առաջարկեց Կառավարություն ուղարկվող ցանկում ներառել նաև այս դեպքը: Տիգրանուհի Խալաֆյանը անդրադարձավ նաև Նարեկ Տերյանի կնոջ աշխատանքի վերաբերյալ՝ ՌԻԴ ՍՊԸ ուղարկված հարցմանը: Ստացված պատասխանի և առկա փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում, շահերի բախման հանգամանքների բացակայությամբ պայմանավորված, որոշվեց ավարտել ուսումնասիրությունը՝ դրա արդյունքները ներկայացնելով մեդիա հրապարակումների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից հրապարակվող հաշվետվության ներքո:

Հանձնաժողովի անդամ Լիլիթն Ալեքսանյանն առաջարկեց քննարկել Արգիշտի Քյարամյանի՝ Հանձնաժողովի սուբյեկտ հանդիսանալու հարցը՝ հաշվի առնելով մամուլում շրջանառվող հրապարակումները: Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից կատարվել է քննարկվող դեպքի վերաբերյալ մեդիա հրապարակումների ուսումնասիրություն, ինչի հիման վրա արձանագրվել է, որ դեպքն առնչվել է 4 սուբյեկտի՝ ՀՀ ԱԺ պատգամավորներին, Քննչական կոմիտեի նախագահին և ՀՀ ԱԺ պատգամավորի օգնականին: Նիստի ընթացքում արձանագրվեց, որ Քննչական կոմիտեի նախագահի նկատմամբ կիրառելի են Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, և վերջինս չի հանդիսանում Հանձնաժողովի կողմից հաստատված Վարքագծի կանոնագրքի սուբյեկտ: Նմանապես, ՀՀ ԱԺ պատգամավորների նկատմամբ ևս կիրառելի չեն Վարքագծի կանոնագրքի դրույթները: Ինչ վերաբերում է ՀՀ ԱԺ պատգամավորի օգնականին, ապա նկատի ունենալով, որ առկա միակ ապացույցը մամուլի հրապարակումն է, որը հաստատող այլ հանգամանքներ տվյալ պահին առկա չէին՝ Հանձնաժողովը որոշեց, որ առկա չեն բավարար փաստարկներ՝ հաստատված համարելու համար Վարքագծի կանոնագրքի առերևույթ խախտման և ըստ այդմ՝ վարույթի հարուցման հիմքերի առկայությունը:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ Աննա Մանուկյանը: Ներկայացվեց նաև նախատեսվող խաղ-մրցույթի վերաբերյալ մանրամասները, այդ թվում՝ քննարկվեցին մրցույթի մասնակիցների շրջանակը, մրցույթի անցկացման ժամկետները: Խաղ-մրցույթի և 2024 թվականի դեկտեմբերի 9-ին նախատեսվող միջոցառման վերաբերյալ մանրամասների ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշեց՝ ԿՀԻԾՄ վարչությանը հանձնարարել՝ կազմել միջոցառման օրակարգը, ներկայացնել Հանձնաժողովի անդամներին՝ հաստատման:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ մանրամասները ներկայացրեց Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ Ռուբեն Զաքարյանը: Մեթոդաբանությունում կատարված փոփոխությունները ներկայացնելուց հետո Հանձնաժողովը որոշեց՝ Հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունն ընդունել որպես լոկալ ակտ և հրապարակել:

Օրակարգում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. Կառլեն Մկրտչյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:
2. Իրականացնել Կառլեն Մկրտչյանի՝ հայտարարագրերի համալիր վերլուծություն:
3. Տավրոս Սափեյանի նկատմամբ չհարուցել ՎԻՎ վարույթ՝ բավարար հիմքի բացակայության պատճառով:
4. Էդգար Արշակյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:
5. Դավիթ Ղումաշյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:
6. «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամից սռացված հարցման պատասխանը Վահե Հովհաննիսյանի նկատմամբ շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտման դեպքով վարույթ հարուցելու համար բավարար հիմք չի հանդիսանում:
7. Ավարտել Նարեկ Տերյանի ուսումնասիրությունը՝ դրա արդյունքները ներկայացնելով մեդիա հրապարակումների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից հրապարակվող հաշվետվության ներքո
8. 2024 թվականի դեկտեմբերի 9-ին նախատեսվող միջոցառման օրակարգը կազմել և ներկայացնել Հանձնաժողովի անդամների հաստատմանը՝ ԿՀԻԾՄ վարչության կողմից:
9. Հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունն ընդունել որպես լոկալ ակտ և հրապարակել:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ	ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ	ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ	ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ